Մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Ծակքար գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի քիմիայի (15 դասաժամ), ֆիզկուլտուրայի (9 դասաժամ), տեխնոլոգիայի տղաների և աղջիկների խումբ (6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

. դիմում(Ձև 1) , մեկ լուսանկար 3 x 4 չափսի,
. բարձրագույն կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),
. անձը հաստատող փաստաթուղթ,
. «Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 26 –րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,»
. ինքնակենսագրություն (Ձև 4) ,
. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
.Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ,
. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում) ,
. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ,կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023 թվականի մարտի 22-ից մինչև ապրիլի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 17:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թվականի ապրիլի 11-ին՝ ժամը 15:00-ին,** Ծակքար գյուղի միջնակարգ դպրոցի շենքում:
Հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Ծակքար, 1-ին փողոց, 16 շենք:
Տեղեկությունների համար զանգահարել 077-01-01-04 հեռախսահամարով: